

«Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/4

22 մարտի 2013թ.

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 12.02.2013թ-ի նիստում քննության է առնվել «Հ. և Ռ.Ղուկասյաններ» ՍՊԸ 06.02.2013թ-ի դիմումով բերված գանգատը «ԿԱ ՊԵԿ ՕՀՎ. 25.12.2012թ. թիվ 1003893 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ: Մասնավորապես.

համաձայն «ԿԱ ՊԵԿ նախագահի 14.09.2012թ. թիվ 1003893 հանձնարարագրի «Օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում «Հ. և Ռ.Ղուկասյաններ» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող «Օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում 25.12.2012թ-ին կազմվել է թիվ 1003893 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 25.131.775 դրամ:

«Հ. և Ռ. Ղուկասյաններ» ՍՊԸ գանգատում մասնավորապես նշված է.

24.12.2012թ.–ին թիվ 1003893 ակտի դեմ առարկություն էինք ներկայացրել (կից ներկայացնում եմ դիմումի պատճեն), որի համաձայն թիվ 1003893 հանձնարարագրի «ԿԱ ՊԵԿ օպերատիվ հետախուզության վարչության 1-ին բաժնի գլխավոր օպերիվադորների կողմից կազմվել է թիվ 1003893 ստուգման ակտը, որի 1-ին և 5-րդ կետերով արձանագրված են խախտումներ՝ ընդհանուր գումարով 25.131.779 դրամի:

Ընկերությունը առարկում է ստուգման ակտի դեմ, քանի որ ակտում մատուցված ծառայությունները դիտվել են որպես կապալառուի կատարած ծառայություն, սակայն ընկերության կողմից մատուցվել է աշխղեկի ծառայություններ:

Ընկերությունը խնդրում է, որպեսզի ստուգման ակտը վերանայվի գանգատարկման հանձնաժողովի կողմից:

«ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով ընկերության ներկայացուցիչների և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձանց ներկայացված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է.

հաշվի առնելով սույն ակտի ԱԱՀ-ի բաժնում շարադրվածը և կիրառելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի և «Կառավարության 18.09.98թ. թիվ 580 որոշմամբ սահմանված դրույթները և քաղաքաշինության նախարարության կողմից սահմանված խոշորացված ցուցանիշների աշխատանքային տեսակների արժեքը, հաշվարկվում է պակաս ցույց տրված համախառն եկամուտը, որն ըստ տարիների կազմում է համապատասխանաբար 2009թ-ին 10.227.539 դրամ, 2010թ-ին 5.386.593 դրամ, 2011թ-ին 11.956.598 դրամ: Պակաս հաշվարկելով իրացված ծառայությունների ծավալներն ընկերությունը պակաս համախառն եկամուտ է հաշվարկել:

Հիմք ընդունելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ և 27-րդ հոդվածների դրույթները շահութահարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 10.407.120 դրամ:

Ստուգման ակտի 5-րդ կետով մասնավորապես արձանագրվել է, որ ստուգվող ժամանակաշրջանում ընկերության կողմից իրականացվել են շինարարական աշխատանքներ, որոնք չեն արտացոլվել ընկերության ՀՏ ներկայացվող հաշվետվություններում կամ ձևակերպվել են որպես աշխղեկի ծառայություն, սակայն ներկայացվել է կապալի պայմանագրեր ակնհայտ ցածր գնով: Ինչպես նաև իրականացվել են

նախագծային աշխատանքներ, որոնք նույնպես չեն ձևակերպվել ընկերության հաշվապահական փաստաթղթերում և չեն ներառվել ընկերության կողմից ՀՏ ներկայացված հաշվետվություններում: Ըստ Աբովյան քաղաքի քաղաքապետի ներկայացված տեղեկատվության, ընկերությունը Աբովյան քաղաքի վարչական տարածքում իրականացրել է շինարարական աշխատանքներ՝ սպասարկման օբյեկտների և բնակելի տների կառուցում թվով 26 հատ, որոնցից ձևակերպվել է միայն 1-ը՝ «Արփիմեդ» ՍՊԸ-ի համար իրականացված աշխատանքները և 11 հատ նախագծային աշխատանքներ:

Ընկերության կողմից կատարված աշխատանքների թաքցված ծավալները հաշվարկելու համար կիրառվում է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի և «Կառավարության 18.09.98թ. թիվ 580 որոշմամբ սահմանված դրույթները, ընկերության կողմից «Արփիմեդ» ՍՊԸ-ի համար կատարված շինարարական աշխատանքների 1 մ² արժեքը, ինչպես նաև նմանատիպ աշխատանքներ կատարող ընկերությունների կողմից սահմանված գների նվազագույն արժեքը, որը կազմում է 18000 դրամ, և քաղաքաշինության նախարարության սահմանված խոշորացված ցուցանիշների աշխատանքային տեսակների արժեքը:

Համաձայն ՀՀ քաղաքաշինության նախարարության 03.04.09թ. թիվ 35-ն հրամանով սահմանված ՀՀ տարածքում կառուցվող շենքերի, կառուցվածքների և շինարարական աշխատանքների տեսակների արժեքը խոշորացված ցուցանիշների ժողովածու աղյուսակի տող 17-ի, երկու հարկանի բնակելի շենքի 1 մ² գինը սահմանված է 202860 դրամ, տող 19-ի՝ մեկ հարկանի բնակելի շենքի 1 մ² գինը սահմանված է 204320 դրամ, իսկ 101-րդ տողի՝ առևտրի և սպասարկման օբյեկտների համար 1 մ² գինը սահմանված է 156860 դրամ:

Կիրառելով նշված նորմերը հաշվարկվում է ընկերության կողմից իրականացրած նախագծերի նախահաշվային արժեքը, հաշվարկվում է համապատասխանաբար ըստ պատվիրատուների կցված աղյուսակ 1-ի: Համաձայն ՀՀ քաղաքաշինության 15.02.08թ. թիվ 19-ն հրամանով սահմանված կարգի, հաշվարկվում է ընկերության կողմից ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերի մշակման արժեքն ըստ աղյուսակ 8-ի:

Ըստ վերոգրյալի, ընկերությունը 2009-2012թ.թ. ընթացքում իրացման շրջանառության մեջ չի ներառել իրականացրած ծառայությունների ծավալները: Արդյունքում հիմք ընդունելով «ԱԱՀ-ի մասին» ՀՀ օրենքի 43-րդ և «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ, 25-րդ հոդվածների դրույթները ԱԱՀ-ի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 14.724.655 դրամ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ստուգվող ժամանակաշրջանում ընկերության կողմից իրականացվել են շինարարական աշխատանքներ, որոնք չեն արտացոլվել հարկային տեսչություն ներկայացվող հաշվետվություններում կամ ձևակերպվել են որպես աշխղեկի ծառայություն: Ընդ որում, ներկայացված կապալի պայմանագրերում և դրանց հիման վրա դուրս գրված հարկային հաշիվներում ծառայությունների մատուցման արժեքն արտացոլվել են ակնհայտ ցածր: Բացի այդ, ընկերության կողմից իրականացվել են նախագծային աշխատանքներ, որոնք չեն ձևակերպվել հաշվապահական փաստաթղթերում և չեն ներառվել հարկային տեսչություն ներկայացված հաշվետվություններում: Մասնավորապես, ստուգման ընթացքում կատարված հարցմանը Աբովյան քաղաքի քաղաքապետի կողմից ներկայացվել է տեղեկատվություն՝ ընկերության կողմից Աբովյան քաղաքի վարչական տարածքում իրականացված շինարարական աշխատանքների վերաբերյալ: Նշված տեղեկատվության համաձայն, ընկերությունը իրականացրել է սպասարկման օբյեկտների և բնակելի տների կառուցում՝ թվով 26 հատ, սակայն ձևակերպել է միայն մեկը:

Ընկերության գանգատում նշված այն պնդումը, որ ստուգման ակտում մատուցված ծառայությունները դիտվել են որպես կապալառուի կատարած ծառայություն, այն դեպքում, երբ ընկերության կողմից մատուցվել է բացառապես աշխղեկի ծառայություններ, հիմնավոր չէ հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ հարկ է նշել, որ ընկերությունն իրականացրել է կապիտալ շինարարության աշխատանքներ, որի համար ունի սահմանված կարգով տրված լիցենզիա: Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել, որ շինարարության իրականացման թույլտվությունները տրվել են ընկերությանը: Բացի այդ, շինարարական ծառայությունների մատուցման

աշխատանքները կատարվել են <Կապալային աշխատանքների կատարման պայմանագրերի> (այսուհետ՝ Պայմանագրեր) համաձայն, որոնցում որպես <Կապալառու> կազմակերպություն հանդես է եկել <<. և Ռ.Ղուկասյաններ> ՍՊԸ-ն:

Հարկ է նշել նաև, որ Պայմանագրերի 2.1 կետի համաձայն. <Աշխատանքը կատարվում է կապալառուի միջոցներով և պատվիրատուի նյութերով>:

Պայմանագրերի 3.4.1 կետի համաձայն, Կապալառուն պարտավոր է աշխատանքները կատարել անձամբ իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, պատշաճ որակով՝ նախագծին համապատասխան: Իսկ Պայմանագրերի 3.4.3 կետի համաձայն, Կապալառուն պարտավոր է ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

Վերոգրյալից ըստ էության հետևում է, որ գանգատում նշված պնդումը՝ ընկերության կողմից (ի դեմս տնօրենի) բացառապես աշխղեկի ծառայություններ մատուցված լինելու վերաբերյալ, չի կարող հիմնավոր համարվել: Հետևապես, չեն կարող հիմնավոր համարվել նաև Պայմանագրերում արտացոլված կատարված աշխատանքների գնի և վարձատրության վերաբերյալ տվյալները:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, սույն գործի վերաբերյալ Հանձնաժողովի կողմից ընդունված որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ (այսուհետ՝ Գանգատարկման խորհուրդ): Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը սովել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <<Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո ռ ո շ ու մ է՝

Ստուգման ակտը թողնել անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ